

ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ
2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բուլղարիայի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

դեկլարավելով 1994 թվականի ապրիլի 25-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բուլղարիայի Հանրապետության Կառավարության միջև կրթության, մշակույթի և գիտության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագրի դրույթներով,

առաջնորդվելով երկու երկրների և ժողովուրդների միջև գոյություն ունեցող ավանդական բարեկամական հարաբերությունների հետագա զարգացման և ամրապնդման ցանկությամբ,

ձգտելով զարգացնել և խորացնել համագործակցությունը կրթության և գիտության բնագավառներում,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը պայմանավորվում են սույն Ծրագրին, իրենց երկրների ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան իրականացնել համագործակցություն կրթության և գիտության բնագավառներում:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Ծրագրի իրականացման համար իրավասու մարմիններն են.

Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը,

Բուլղարական կողմից՝ Բուլղարիայի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

ՀՈԴՎԱԾ 3

Կրթական ոլորտում համագործակցությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, Կողմերը կապահովեն կրթական համակարգերի կառուցվածքի,

բովանդակության և կազմակերպման, ինչպես նաև կրթական և գիտական հաստատությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկության փոխանակում:

ՀՈՂՎԱԾ 4

Կողմերը կիրականացնեն կրթական բոլոր մակարդակներին վերաբերող ուսումնական ծրագրերի փոխանակում, ինչպես նաև կաջակցեն համատեղ կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

ՀՈՂՎԱԾ 5

Միջոյարոցական կապերն ամրապնդելու նպատակով Կողմերը կխրախուսեն աշակերտների փոխակազման ծրագրերի իրականացումը և կկազմակերպեն փորձի փոխանակում միջնակարգ և նախադպրոցական կրթության բնագավառներում: Այդ նպատակով Կողմերը 10-օրյա ժամկետով կփոխանակեն նախադպրոցական և միջնակարգ դպրոցների առավելագույնը երկուական մասնագետ: Մանրամասները կհստակեցվեն դիվանագիտական ուղիներով:

ՀՈՂՎԱԾ 6

Կողմերը կաջակցեն երկու երկրների բարձրագույն ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների միջև ուղղակի կապերի հաստատմանը և զարգացմանը՝ այդ հաստատությունների միջև կնքված երկկողմ համաձայնագրերի հիման վրա:

ՀՈՂՎԱԾ 7

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին տարեկան կտրամադրի.

- բակալավրի կամ մագիստրոսի կրթական աստիճան ստանալու համար առավելագույնը 4 կրթաթոշակ՝ ուսումնառության լրիվ ժամկետով,
- ոչ պակաս, քան 1 ամիս և առավելագույնը մինչև 12 ամիս ժամկետով կրթաթոշակ՝ մասնագիտացումը խորացնող և գիտական հետազոտություններ կատարող ասպիրանտների, դոկտորանտների, դասախոսների համար:

Մանրամասները կհստակեցվեն դիվանագիտական ուղիներով:

ՀՈՂՎԱԾ 8

Կողմերը կստուգեն գործուղված ուսանողների, ասպիրանտների և գիտահետազոտողների լեզվական գիտելիքները՝ համապատասխան երկրում կրթություն ստանալու համար: Պարտադիր պայման է, որ ծրագրին մասնակցող

ասպիրանտները և գիտահետազոտողները, բացի իրենց մայրենի լեզվից տիրապետեն առնվազն մեկ օտար լեզվի (ռուսերեն կամ անգլերեն):

Ուսանողական կրթաթոշակներին ներկայացված դիմորդները, որոնք չեն տիրապետում համապատասխան Կողմի լեզվին, նախքան բուն կրթական ծրագրին անցնելը, հնարավորություն կունենան մասնակցել լեզվի մասնագիտացված անվճար դասընթացներին համապատասխան բուհերի լեզուների ուսուցման բաժիններում:

ՀՈՂՎԱԾ 9

Յուրաքանչյուր Կողմից կրթաթոշակ ստացող ուսանողին առանց իր երկրի իրավասու մարմինների համաձայնության չի թույլատրվի փոխել իր մասնագիտությունը:

ՀՈՂՎԱԾ 10

Համաձայն 7-րդ հոդվածի՝ ընդունող Կողմը կրթական ծրագրին մասնակցող անձանց կապահովի.

- անվճար կրթությամբ,
- կրթական ծրագրով՝ համաձայն Ընդունող կողմի ազգային օրենսդրության,
- ուսանողական հանրակացարանով՝ Ընդունող կողմի երկրում գործող ազգային օրենսդրության համապատասխան,
- սննդով ուսանողական հանրակացարանում պետության սուբսիդավորմամբ, Ընդունող կողմի ազգային օրենսդրության համապատասխան:
- անվճար բժշկական ծառայություններով՝ ընդունող Կողմի ազգային օրենսդրության համաձայն,
- գրադարաններից, արխիվներից, փորձասենյակներից և այլն օգտվելու թույլտվությամբ:

Տվյալ երկրի մայրաքաղաք մեկնելու և վերադարձի ճանապարհածախսը, ինչպես նաև բժշկական ապահովագրությունը կհոգա ուղարկող երկիրը կամ թեկնածուն: Ընդունող Կողմը կհոգա երկրի ներսում ծրագրի իրականացման հետ կապված տեղաշարժի ճանապարհածախսերը:

Հոդված 7-ով նախատեսված ծրագրին դիմած թեկնածուների փաստաթղթերը պետք է ներկայացվեն երկու երկրների համապատասխան հաստատություններ ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա մայիս ամիսը և մանրամասները պետք է հստակեցվեն դիվանագիտական ճանապարհով:

ՀՈՂՎԱԾ 11

Կողմերն իրենց համալսարաններում կապահովեն հայերեն և բուլղարերեն լեզուների և գրականության առարկաների դասավանդումը և կաջակցեն հայոց լեզվի, գրականության, ինչպես նաև բուլղարերեն լեզվի և գրականության դասախոսների երկկողմանի փոխանակման իրականացումը՝ նման փոխանակումներ անելու անհրաժեշտության և հնարավորության դեպքում:

ՀՈՂՎԱԾ 12

Համալսարանների միջև դասախոսների փոխանակման դեպքում ընդունող Կողմը կապահովի.

- ամենամսյա աշխատավարձով՝ յուրաքանչյուր երկրում գործող ազգային օրենսդրությանը համապատասխան,

- կահավորված կացարանով,

- անվճար բժշկական ծառայություններով՝ ընդունող Կողմի ազգային օրենսդրությանը համաձայն:

Տվյալ երկրի մայրաքաղաք մեկնելու և վերադարձի ծախսերը, ինչպես նաև բժշկական ապահովագրությունը կհոգա ուղարկող Կողմը կամ դասախոսը: Ընդունող Կողմը կհոգա երկրի ներսում ծրագրի իրականացման հետ կապված դասախոսների տեղաշարժի ճանապարհային ծախսերը:

ՀՈՂՎԱԾ 13

Սոֆիայի «Սբ. Զլիմենթ Օհրիդսկի» ("Sv. Kliment Ohridski") և Վելիկո Տրևոլայի «Սբ. Կիրիլ և Մետոդիի» ("Sv. Kiril i Metodii") համալսարաններում բուլղարերեն լեզվի, գրականության և մշակույթի ամառային դասընթացներին մասնակցելու համար բուլղարական կողմը կընդունի առավելագույնը երկու հայ ուսանողի՝ անվճար փոխանակման սկզբունքով:

Բուլղարական կողմը կապահովի դասընթացների համար նախատեսված բոլոր ծախսերը (կացարան, դասընթացներ և մշակութային ծրագրեր): Հայաստանի մասնակիցները կօգտվեն բժշկական ծառայություններից՝ երկրում գործող օրենսդրությանը համաձայն:

Հայկական կողմը կամ իրենք՝ մասնակիցները կհոգան այն վայրի ճանապարհածախսը և բժշկական ապահովագրությունը, որտեղ կանցկացվեն դասընթացները:

ՀՈՂՎԱԾ 14

Կողմերը կխրախուսեն բարձրագույն կրթության, գիտության և գիտատեխնիկական բնագավառներում համալսարանների, գիտական և

գիտատեխնիկական կազմակերպությունների դասախոսների, գիտնականների և հետազոտողների փոխանակումը՝ իրենց գիտական և կրթական հաստատությունների փորձառությունն ու նվաճումները տարածելու, ինչպես նաև գիտական համատեղ նախագծերում մասնակցելու համար: Փոխանակման մանրամասները կհստակեցվեն անմիջապես համապատասխան համալսարանների և գիտական հաստատությունների կողմից՝ իրենց ինքնավարության շրջանակներում:

ՀՈՂՎԱԾ 15

Գիտական և գիտատեխնիկական համագործակցությունը զարգացնելու և ընդլայնելու նպատակով Կողմերի համապատասխան գիտական և գիտատեխնիկական կազմակերպություններն ու բարձրագույն կրթական հաստատությունները կմշակեն գիտահետազոտական համատեղ ծրագրեր և նախագծեր: Գիտական համագործակցության արդյունքների փոխանակման և կիրառման ձևերը կհստակեցվեն ըստ գիտական հաստատությունների և համալսարանների միջև անմիջապես ստորագրված երկկողմ Չամաձայնագրերի՝ համաձայն Կողմերից յուրաքանչյուրում գործող օրենսդրությանը:

Երկկողմ համագործակցության ամրապնդման և հետագա զարգացման նպատակով բուլղարական կողմը, որպես ԵՄ Հորիզոն 2020 ծրագրի մասնակից պետություն և հայկական կողմը, որպես նույն ծրագրի ասոցացված պետության կարգավիճակ ունեցող կողմ համաձայնում են ուսումնասիրել և օգտագործել ԵՄ հետազոտությունների և նորարարությունների ամենամեծ ծրագրի հնարավորությունները:

ՀՈՂՎԱԾ 16

Կողմերը կխրախուսեն երկուստեք մասնակցությունը միջազգային մրցույթներին և նման այլ միջոցառումներին:

ՀՈՂՎԱԾ 17

Կողմերը կխրախուսեն իրենց երկրների կրթական և գիտական ամսագրերում հոդվածների և համատեղ ուսումնասիրությունների և հետազոտությունների հրապարակումը, ինչպես նաև համատեղ գիտաժողովների անցկացումը:

ՀՈՂՎԱԾ 18

Փոխադարձ կապերի ամրապնդման, փորձի փոխանակման և համագործակցության զարգացմանն առնչվող հարցերի քննարկման նպատակով Կողմերը կկազմակերպեն փորձագետների խմբերի ամենամյա փոխանակում՝ երկու կողմերի ֆինանսական հնարավորություններին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 19

Կողմերից մեկի երկրում դիվանագիտական և հյուպատոսական առաքելություն իրականացնող աշխատակիցների երեխաները անվճար կսովորեն պետական միջնակարգ դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում (բացառությամբ բժշկական և արվեստի մասնագիտությունները) իրենց ծնողների՝ այդ երկրում առաքելության կատարման ժամանակահատվածում:

Ուսանողները կարող են սովորել և ձեռք բերել բակալավրի որակավորում և մագիստրոսի կոչում: Ընդունող Կողմը չի վճարում կրթաթոշակ և չի ապահովում ուսանողական հանրակացարանով:

ՀՈՂՎԱԾ 20

Ընդունող Կողմը մյուս Կողմի քաղաքացիներին կացության կարգավիճակ ստանալու կամ կացության ժամկետը երկարացնելու դեպքում կազատի նրանց կացության կարգավիճակ ստանալու համար նախատեսված հարկերի վճարումից, եթե այն կապված է սույն Ծրագրի իրականացման հետ:

ՀՈՂՎԱԾ 21

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ սույն Ծրագրում կարող են կատարել փոփոխություններ և լրացումներ, նրանք կձևակերպվեն սույն Ծրագրի անբաժանելի մաս հանդիսացող առանձին արձանագրություններով և ուժի մեջ կմտնեն սույն Ծրագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

Սույն Ծրագիրը չի բացառում համագործակցության և նախաձեռնության մնացած այլ ձևերը, որոնք լրացուցիչ կերպով կարող են համաձայնեցվել դիվանագիտական ուղիներով:

ՀՈՂՎԱԾ 22

Կողմերի միջև ծագած ցանկացած տարաձայնություն՝ կապված սույն Ծրագրի մեկնաբանության կամ կիրառման հետ, կլուծվի բանակցությունների և խորհրդատվությունների միջոցով:

ՀՈՂՎԱԾ 23

Սույն Ծրագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և կմնա ուժի մեջ մինչև նոր Ծրագրի ստորագրումը, որը ուժը կորցրած կճանաչի այս Ծրագիրը:

Սույն Ծրագրի ուժի մեջ մտնելու պահից կղաղարի գործել Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառներում 2009-2012 թվականների համագործակցության ծրագիրը, սակայն կատարման փուլում գտնվող համատեղ ծրագրերը և կրթական գործունեությունները կշարունակվեն մինչև իրենց ավարտին հասնելը:

Կատարված է Սոֆիա քաղաքում 2018թ. հոկտեմբերի «__»-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բուլղարերեն և անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Ծրագրի դրույթների մեկնաբանման ընթացքում ծագած տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**



**ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**